

այժմերի սպառումից, սառչելուց, հասակից և առողջական վիճակից:

«Ո՛ր կերակուրը պէտք է դերագասել—տա՛նք թէ՛ սառը»: Ո՛ւ մէկը և ոչ միւսը: Թէ շատ սառը և թէ շատ տաք կերակուրը մնասում է ատամներին և ստամոքսին: Սառը բանին կարելի է սովորել և ստամոքսը ընտելացնել նորան. տաքին չէ կարելի երբէք ընտելանալ. նա միշտ կը մնասէ ստամոքսին: Բուրբուրի առողջ կենդանիները ձմեռը ձիւն են ուտում և բնաւ չեն ուտում տաք կերակուր: Սառն ըմպելիքը ստամոքսին և արեանը ջերմութիւն է տալիս, նպաստում է նիւթերի փոխանակութեան կանոնաւորութեանը ուրեմն և օգտակար է առողջութեան համար: Շատ տաք ըմպելիքը արեանը հետեւապէս և ամբողջ մարմնին չափազանց շատ ջերմութիւն է տալիս, ուստի և նուազեցնում է նիւթերի փոխանակութիւնը, ուրեմն՝ մնասում է առողջութեան: Գու (գաղջ) ըմպելիքը և ոչ տաքը, օգտակար է հիւանդներին՝ քրտինք յառաջացնելու համար, ծերերին և առհասարակ ամէն մարդու, որովհետեւ նպաստում է խիստ դուրս գալուն:

Ջրի կերակուրը, սուրճը, թէյը ևլն. երբէք պէտք չէ տաք տաք ընդունել (այսինքն +600 ջերմութեամբ, ըստ Ռէօմբուրի որ մաքման ջերմութիւնից զերթէ երկու անգամ աւելի է)՝ նորա պէտք է դու լինին, այսինքն ունենան +400 կամ +450 ըստ Ռ. այնպէս որ խմելու ժամանակ մարդու շրթունք չայրեն: [Այն հիւանդութիւնը, որ սովորաբար կոչւում է ստամոքսի ճմլումն, յառաջ է գալիս շարունակ տաք կերակուր և ըմպելիք ընդունելուց, սրտնք շատ արեւն են հոսեցնում զէպի ստամոքսը և յառաջ են բերում ցուռ տուղ բշտիկներ]: Նմանապէս մնասակար է շատ սառը ջուր խմելը, այսինքն ըստ Ռ. +60-ից պակաս ջերմութիւն ունեցողը, որովհետեւ նա մնասում է ատամներին, եթէ գործ է ածուում տաք կերակրի հետ միասին, և շնչառութեան գործարաններին, մանաւանդ երբ մարդ քրտնած է լինում վազվելուց, պար գալուց, խօսելուց, երգելուց կամ ծիծաղելուց:

(Կր շարունակով)

ՄԱՆՐԱԼՈՒՐԸ

Rhopala obodata նոր անկիզի մուկնի.—Անգղիական Gartener Chronicle թերթն այս առանձնաշառուկ բոյսի մասին հետաքրքրական մանրամասնութիւններ է հաղորդում. Այդ կարճարուն թուփը, որն այնքան էլ տերևառատ չէ, գտնւում է զլիսա-

ւորապէս Հարաւային Ամերիկայի տափաստաններում: Երկարամեայ դիտողութիւնները ցոյց են տուել արդէն, որ յաճախ կրկնուող հրդեհներն ոչ թէ միայն չեն կարողանում այրել ու ոչնչացնել այս օտարտաի բոյսը, այլ մինչև անգամ նպաստում են նրա աճելուն ու բազմանալուն: Կոլումբիայի Ռոմէն գաւառում, ինչպէս և Հարաւային Ամերիկայի ուրիշ շատ դաշտավայրերում տեղացի բնակիչները սովորութիւն ունին այրելու արեգակից չորացած խոտերն, որոնք նոր ծլող բոյսերի ազատ աճելուն արգելք են լինում: Հրդեհից մնացած մոխիրը, որն իր մէջ մեծ քանակութեամբ բուսական աղ է պարունակում, հողի բարեբերութեան օգնում է: Այսպիսի հրդեհների ժամանակ տափաստաններում աճող բոլոր խոտերն ու մացառները, ծառերն ու թփերը, մինչև իսկ սրանց արմատները, այրւում են, բայց մի ծառ միայն բացառութիւն է կազմում, ինչպէս հաստատում է վերոյիշեալ լրագիրը, և չի այրւում: Այդ շնչին լծուփն Rhopala obodata-ն է: Սրա բնի արտաքին կիզկէր, որի հաստութիւնը հազիւ թէ մի սանտիմետր է, բաղկացած է մեռած վանդակիկներից, որոնք կրակի այրող զօրութեան չեն ենթարկւում, այլ ընդհակառակը բնի շուրջը մի անկիզի վահան կազմելով, պաշտպանում են բոյսի ներքին մասերը: Այսպէս ուրեմն այս անկիզիկի նոր մորենին չի այրւում և աճում ու բազմանում է Կոլումբիայի հրդեհուած տափաստաններում:

Նուագող ծառ.—Հարաւային Նուրիայում Tso-far անունով մի ծառ կայ, որը բացի առատ խիժ արտաթորելուց, անց ու դարձ անողների առանձին ուշադրութիւն է գրաւում քաղցր ու մեղմ նուագածութեամբ: Ամեն անգամ երբ մի թեթեւ քամի է փչում, ծառն սկսում է իր նուագը և անծանօթ ուղեորին երկմտութեան մէջ ձգում: Այժմ շնորհիւ Շտէյնֆուրտի կատարած հետախուզութեան, գաղտնիքն արդէն բացուած է: Այդ ձայներն յառաջանում են այն փոքրիկ ծակոտիկներից, որոնք գտնւում են այդ ծառի բազմաթիւ բաւականին մեծ փշերի վրան: Մի տեսակ փոքրիկ միջատներ, ծածկելով փշերի հիմքերը և դատարկելով նրանց մէջը, այնտեղ իրենց սիրած կերակուրն են փնտռում և միևնոյն ժամանակ բնական սրինգներ պատրաստում: Այս փոքրիկ սրինգների մէջ մտնելով քամին, հաճելի ձայներ է յառաջանում և նայելով նրա մեղմ կամ սաստիկ փչելուն փոխւում է նուագը և կամ մի եղանակից մի ուրիշ եղանակի անցնում:

* *

Բաժանեալոց դարձ սկիզբը. Դեռ մինչև այսօր չարունակում են վիճել, թե Ի. դարձ սկիզբը երբ պէտք է համարուի: Մէկը հետեւեալ հետաքրքրական հաշիւն է ներկայացնում:

Մի առ ժամանակ ննթադրենք, թէ տասնիններորդ դարը վերջացաւ 1899 թ. դեկտեմբերի 31-ին, և թէ ուրեմն մենք արդէն քսաներորդ դարումն ենք ապրում:

Ամենայն դար հաւասար է 36,500 օրուայ, իսկ որովհետեւ դարու մէջ 25 նահանջ տարիներ կան, ապա ուրեմն 36500 օրերին պէտք աւելացնել 25 օր, որով մի դար հաւասար կը լինի 36,525 օրուայ, իսկ 19 դարը կուենայ $19 \times 36,525 = 693,975$ օր:

Արդ տեսնենք, թէ արդեօք այդքան օրերին հաւասար կը լինի 1899 տարին, եթէ այս թիւը բազմապատկենք 365 օրով և վերան աւելացնենք (+) այնքան օր, որքան որ 1899 տարիներին մէջ նահանջ են եղել, այսինքն 474 օր:

$1899 \times 365 + 474 = 693,609$ օր.
 իսկ առաջ ստացել էինք . . . 693,975 օր.

Ուրեմն դեռ էլի պակասում է 366 օր: Հիմա պարզ է, որ մինչև տասնուինն դարու լրանալը տակաւին պակասում է մի ամբողջ նահանջ տարի, որ և մեր այժմեան 1900 թուականն է: Ուրեմն այդ թուականի լրանալով պետի սկսուի Ի. դարը, և մենք էլ քսաներորդ դարու սկիզբը պէտք է համարենք անշուշտ եկող 1901 թ. յունուարի 1-ը:

*
 **

Արեւստիան մասաւս, քամիակի մերսերացնէր և սարդի ոստայնից պատրաստում մեծաբանքնը Պարիզի 1900 րոտականի Համաշխարհային Յուզանակոյտում: — Մարսեան գաշտում կառուցուած անկուածների շքեղ շինութեան մէջ, որ զուգահեռական է Avenue de la Bourdonnais-ին, Պարիզի առաջիկայ Համաշխարհային Յուզահանգիսի այցելուներն և յատկապէս այցելու տիկիներն իսկական հրաշալիքներ պիտի գտնեն, որոնց մէջ առաջնակարգ տեղ են բռնում վերջին ժամանակներս միայն վաճառականութեան մէջ երեւցած արհեստական մետաքսից, մերսերացրած բամբակից և սարդի ոստայնից գործուած կերպաները, Արհեստական մետաքս պատրաստելու գիւտն ու նրա արած յառաջադիմական քայլերը պարտական ենք Քրանսիացի հանձարեղ գիտնական Հարգոնէին: Այս տեսակ մետաքսեղէնի առաջին նմուշներն միայն 1889 թուի ցուցահանգիսին երևացին, Այժմ այդ հրապուրիչ ապրանքն այնքան ընդունելութիւն է գտել, որ Բեզանսում կարիք է զգացուել առանձին գործարան բանալու, որտեղ և օրական 150 կիլոգրամ (9 փ.

6 գր.) արհեստական մետաքս է պատրաստուած և իրրեւ ընտիր մետաքս գործ է դրուած հագուաների, կահ կարասիների և այլ տնային պէտքերի համար:

Ընծու մետաքս պատրաստողներն իրենց սկզբնական փորձերի ժամանակ մեծ դժուարութիւնների էին հանդիպում, երբ այդ գործուածքները զանազան գոյներով ներկել էին ուզում: Բայց շուտով այդ խոչընդոտների առաջը կարողացան անել: Աերջապէս, դրանից աւելի մեծ ու կարեւոր հանգամանք էր և այն, որ այդ նոր անկուածները խիստ գիրաւովա լինելով, իսպառ ոչնչացնում էին արուեստաւորների գործ գրած բոլոր ջանքերը, Սակայն մարդու հզօր միտքը այդ շարեաց ծարն էլ գտաւ:

Մերսերացրած բամբակի արդիւնաբերութեան մէջ մտնելն այն խորհուրդն ունէր, որ մետաքսը փոխարինուէր բամբակով, որն առաջինից ոչնչով յետ չի մնում իր գեղեցիկ յատկութիւններով: Այդ հետեւանքներին հասնում են «մերսերացում»-ով, այսինքն քիմիական մի առանձին բարդ գործադրութեամբ, որն իր անունն ստացել է ֆրանսիացի քիմիկոս Մերսերից, Սա, սրանից տասն և հինգ տարի առաջ, գտաւ, որ եթէ բամբակը՝ ննթարկելու լինինք բուսական աղերի և կամ թրթուռաների ազդեցութեան, նոր յատկութիւններ կստանայ, Հատ նշանաւոր է այդ աղերի հրաշալի ներգործութիւնը, երբ բարձր աստիճանի ջերմութիւն չեն ունենում: Ահա այդ միջոցով հնարաւոր եղաւ բամբակէ գործուածներին մետաքսի փայլ տալ: Սակայն այս էլ պէտք է աւելացնել, որ բամբակեղէնն էլի բամբակ է մնում և ոչ թէ մետաքս գաճնում: Այդ բանը հեշտ է լինում ստուգել քիմիական վերլուծութեամբ և թէ մանրադիտակով:

Աերոյիշեալ երրորդ գործուածքի, այն է սարդի ոստայնից պատրաստուած մետաքսեղէնի սկզբնական գաղափարը պատկանում է Բոն—Իւ—Սէնդ—Իլէրին, Մոնպելիէի քաղաքային վարչութեան անդամներից մէկին, Բոմիւրին, ջերմաչափի հնարողին, որոնք դեռ այս դարի (ԺԻ) սկզբին կարծիք յայտնեցին, թէ հնարաւոր է սարդի ոստայնը գործնական նպատակների ծառայացնել, Իրականացնել այդ միտքը կարողացաւ անգղիացի Բոյտ անունով վաճառականը, որը Լոնդոնի Society of arts-ին ներկայացրեց 6000 մետր երկարութեան մետաքսի մի կտոր, որը գործել էին 22 սարդ երկու ժամուայ ընթացքում: Ի հարկէ, այդպիսի նպատակների համար պէտք կարող էին գալ միայն սարդերի խոշոր տեսակները, յատկապէս այնպիսիները, որոնք պատահում են Պարապուայում: Արգենտինեան հասարակապետութեան մէջ, Հընդ-կաստանում, Չիլաստանում և Աւստրալիայում, Այս սարդերը հրեշային մեծութիւն են ունենում:

Բայց մեր յայտնի նպատակի համար ամենից ազնիւ տեսակներն են համարուում Մադագասկար լողու վերայ գտնուածները: Այս սարգերի կեանքն ու նրանցից օգուտ քաղելու միջոցներն խիստ գեղեցիկ կերպով ուսումնասիրել է ֆրանսիացի քաղաքէ հայր «Պամբուէն»: Այս սարգը, «halaben Nephila madagascariensis», իսկ որ հրէշ է, սակայն էգը, Եւրոպայում յաճախ պատահող, սովորական սարգերից մի քիչ մեծ է, այն ինչ արուն աչքի է ընկնում իր ահագին մեծութեամբ: Նրա մարմնու երկարութիւնը 5 սանտիմետր է, իսկ եթէ նրա թաթերի մէկի ծայրից մինչև միւսը հաշուելու լինինք, 14 սանտիմետր: Այդ սարգերից այսպէս են օգտուում. նրանց ուժ-ուժ տեղաւորում են փոքրիկ վանդակների մէջ, սակայն այնպէս, որ զուխները ներսի կողմում լինին, իսկ որովայնները՝ դրսի: Արագ պտտուող իլիկի օգնութեամբ իւրաքանչիւր սարգից 40 մետր թել է ստացւում: Եւսոյ սրանց փոխարէն ուրիշներին են վաճում: Այս գործողութիւնից յետոյ, սարգերը, պարզ նկատւում է, խիստ ուժասպառ են լինում: Այդ ժամանակ նրանց կուշտ կերակրում են, ճանձեր աղով որով և նրանց առողջութիւնն ու տրամադրութիւնը տեղը բերում: Ըստ երեւոյթին, ընտրութիւն անելով, կարծես, հնարաւոր է լինում անխնջ սարգեր ունենալ, որոնք անընդհատ թել են մատակարարում: Հայր Պամբուէն պատմում է, որ իր սարգերից մէկը 27 օրում 4000 մետր թել է տուել: Սակայն ոյժի այդքան ծայրայեղ գործադրութիւնն անհետեանք չանցաւ. խեղճ միջատն շուտով սառկեց:

* *

Հետաքրքիր փորձեր:—Ճարտալուծութիւնն (քիմիա) առհասարակ ծանր ու անըմբռնելի գիտութիւն են համարում: սակայն այս նկատողութիւնն արդարացի կարելի է համարել միայն այն ժամանակ, երբ զուգընթացաբար գրաւիչ փորձեր տեղի չեն ունենում: Օրին. եթէ սրուակի մէջ ջրածնական ծծմբուտ ունինք, հեշտութեամբ կարելի է մի պոպիսի թեթեւ փորձ կատարել: Սրուակի բերանից հանելով խցանը, փոխարէնը յարմարացնում են մի բեզինէ խողովակ, որի վերջն ծայրի վրան հաղցնում են ապակե սրաքերան ձորակ և ապա թոյլ տալիս, որ գազն ազատ դուրս հոսի: Եւ եթէ վառելու լինինք գազն ու ձորակի բերանն մօտեցնենք կոնքի մէջ լցրած ջրի մակերևոյթին, նրա արձակած բոցով ոչ թէ միայն կարելի կլինի գրել ջրի երեսի վրան, այլ և գծել ու նկարել ինչ հաճելի կլինի:

Այցան այն ժամանակները, երբ մարդիկ ցանկանալով մէկի ցնորուն նպատակների անիրագործելի լինելը հասկացնել, ասում էին «Դնա ու

սառցի վրայ գրել»: Իսկ այժմ, ինչպէս տեսնում էք, ոչ թէ սառցի, այլ և ջրի վրայ էլ են գրում:

Երկրորդ փորձն անելու համար, բաժակի մէջ մի քանի կտոր կրածին են ձգում: Եւսոյ մէջը ջուր լցնելով, իսկոյն փայտի թեփով ծածկում երեսը: Պրի ջրածինը հետզհետեւ հաւարուելով թեփերի տակը, սկսում է կամաց կամաց վեր բարձրացնել նրանց ու տրաքացնել, որից և խիստ կանոնաւոր օղակներ են կազմւում ու բաժակի միջից վեր ելնելով, լողում օդի մէջ:

* *

Ի՞նչ առեւ մարդս.—Այս հարցին մի անզգլացի ընագէտ հետեւեալ պատասխանն է տուել: Մարդու մէջ այնքան ապխտակուց կայ, որքան 1200 ձուի մէջ. իսկ նրա ամբողջ մարմնակազմի մէջ պարունակուած լուսակրից կարելի է 835000 լուցկի շինել, ածխից՝ 9500 մատիտ, ճարպից՝ 15 գրուանքայ մոմ: Բացի դրանցից, եղած երկաթից կըստացուի մի կոպէկի մեխ, կունենանք և մի կոպէկի աղ, երկու կոպէկի շաքար և 90 լիտր (7½ գր.) ջուր, որ փող չարժէ: Աւրեմն, եղած չեղածն, եթէ այն էլ թանկ գնով հաշուելու լինինք, կարժենայ ընդ ամենն 20 ռուբլի:

* *

Հետազոյրն ու կենդանիները.—Սովորաբար այնպէս ենք կարծում, թէ հեռագիրը միմիայն նոր լուրեր և կամ անյետաձգելի տեղեկութիւններ հաղորդելու համար է ծառայում, սակայն Revue des Re-vues թերթի վերջին համարներից մէկում ցոյց են տրուած և ուրիշ երկրորդական ծառայութիւններ, որոնք մինչև օրս անուշադիր էին մնացել, բայց հեռագրի մատուցածներն են և շարունակում է մատուցանել թէ մարդկանց և թէ նոյն իսկ կենդանիներին: Հաստատ աղբիւրներից յայտնի է, որ երբ նորվեգիայում առաջին անգամ հեռագրասիւններ էին սկսել տնկել, արջերը, լարերի մէջ ընկած քամու ձայներն լսելով, խարուել էին և հեռագրի սիւնները մեղուների փեթակներ ընդունել, ուստի և մեծ քանք էին դորձ գնում տակից պոկելու իսկ կտցահարները կարծելով թէ այդ սիւնները լիքն են միջատներով, փորել ու ծակոտնեւրով ծածկել էին սիւնները: Ժամանակի ընթացքում կենդանիների այդ թիւրիմացութիւնը կամաց կամաց անցաւ, և նրանք ստիպուած էին դրանից յետոյ մի քիչ զգուշութեամբ վերաբերուել մարդկանց հեռագրասիւններից օգտուելու արդար իրաւունքին: Ափրիկայի հարաւարեւելեան մասում, Նատալում, յաճախ պատահող մի տեսակ թրուշուներ, որ, նախ քան հեռագրասիւնների ու նրանց լարերի այդ կողմերում երևան գալը, սո-

փորութիւն ունէին իրենց բունն, իբր ճոճ, ծառերի բարձր ճիւղերից կախելու, իսկ այժմ կախում են հեռագրալարերից, որտեղ այլ ևս օձերը չեն կարող բարձրանալ։ Այդ թռչուններն անշուշտ աւելի յարմար են տեսել իրենց բներն այդ նոր միջավայրում շինելը, բոլորովին ապահով գտնելով այն, որովհետեւ նոր բներն աւելի քնդարձակ են և ունին ել և մուտի լայն անցքեր, Թութակներն, ընդհակառակը, խիստ կատաղութեամբ յարձակում են հեռագրալարերի վրայ, կտրտում են նրանց կապերը և քարդում մինչև իսկ բաժանները։ Մեղուներն էլ երբեմն երբեմն օգտւում են հեռագրասիւններից, ժամանակաւոր բնակութիւն հաստատելով նրանց բաժանների մէջ, որտեղ, իբրև իջևաններում, հանգստանում են հեռու մեղուանոցը չհասած, Սարդերն աւելի յաճախ ձգում են իրենց օստայները լարերի այս մասից միւսը, որով և վնասում ձայնի կանոնաւոր հաղորդուելուն։ Մեքսիկայում մի ուրիշ տեսակ թռչուններ կատարելապէս հասկացել են հեռագրասիւններից ու լարերից օգտուելու եղանակը։ Այդ թռչուններն հեռագրի սիւների զլխից իրենց որսն են դիտում, մի քիչ ներքեւում, բաժաններում, իրենց բները շինում և կամ պաշար հաւաքում, իսկ զիշերները հանգստանում լարերի վրան օրուայ ծանր հոգսերից յետոյ։ Ինչպէս տեսնում էք, հեռագիրն, բացի իր իսկական գործադրութիւնից, բաւականին մեծ ծառայութիւն էլ և մատուցանում կենդանիներին. իսկ մարդկանց տուածի մասին՝ այդ արդէն աւելորդ կլինի յիշել։ Հին անպէտքացած սիւներն, եթէ փայտից են լինում, աներ ծածկելու համար են գործադրում, իսկ եթէ երկաթից կամ ուրիշ մետաղից, կոյուղիների ու ջրմուղների համար, Լարերն էլ, երկաթից լինին, թէ պղնձից, մի և նոյն է, միշտ էլ պիտանի են։

* *

Նշանաւոր քուարանագէտ. — Անցեալները Պետերբուրգի խմբագրատներից մէկի մէջ հետաքրքիր հարց ու փորձի ենթարկուեցաւ հանձարեղ թուաբանագէտ պարոն Ռիամանդին, որի մասին գրում են այժմ, ինչպէս Ռուս, այնպէս և արտասահմանի յայտնի լրագրները, Պերիկլէս Ռիամանդին աղգով յոյն է և ծնուած է Պլարոս կղզում (Յոնիական արշիպելագ)։ 1898 թուից նա իբրև աչքի ընկնող հաշուագէտ առանձին ուշադրութիւն է գրաւում։ Շատ երկար կլինէր նրա մասին եղած բոլոր գրութեանները մի առ մի թուել, ուստի և կրաւակաւանանք մէջ բերելով միայն այն տեղեկութիւնները, որոնք վերոյիշեալ խմբագրութեան անմիջական վրկայութիւններն են, և ոչ մի կասկածի առիթ տալ չեն կարող։ Ահա այդ վրկայութիւնը.

«Պրն. Ռիամանդին մեր բոլորիս աչքի առաջ մի կամ երկու րոպէի մէջ բազմապատկութեամբ այսպիսի բարդ գործողութիւններ էր կատարում, որին. 9674335×5641097 , նոյնպէս արագ և ի հարկէ, բոլորը անգիր, քառակուսի աստիճանի էր բարձրացնում 420996-ը, կամ քառակուսի ու խաւանարդ արմատներ հանում նման մեծ թուերից։ Նրա բերանացի հաշուելու ընդունակութիւնն իսկ կապէս հրաշալի է։ Օրին. թելադրում են մէկ միւսի յետևից մի քանի այսպիսի թուեր. 276, 955, 354, 365, և նա 3—4 րոպէից համապատասխան աստիճանների է բարձրացնում և ուղիղ պատասխաններ տալիս։ Եւ կամ գրում են 30—40 տարրեր նշանակութեան թուանշաններ, մի քանի հորիզոնական տողերի մէջ զետեղելով։ Ռիամանդին՝ մի երկու րոպէ ուշի ուշով դիտելով թուերը փակում է աչքերը, շարժում շրթունքները, ինչպէս մի գպրոցական, որ իր գծուար դասերն է սովորում, և յետոյ բաց անում աչքերն ու կրկին նայում գրուած թուանշաններին, և ստուգում։ Ի վերջոյ համարձակօրէն ու անթերի անգիր ասում, ինչ ուղղութեամբ և ցանկանալու լինիք վերևից՝ ներքև, աջից՝ ձախ, ներքևից՝ վերև ել։ Շատ պարզ է, թուերը խորը տպաւորւում են նրա մտքում և ապա առանց մեծ դժուարութեան վերարտադրում, Բացի դրանցից Պ. Ռիամանդին նոյնպիսի դիւրութեամբ պատասխանում է թէ օրին. քանի վայրկեան կայ 75 դարի մէջ, հաշուելով և նահանջ տարիները, Եւ այս մտայ հաշիւներն այնպիսի արագութեամբ են կատարւում, որ նրան հետևողը չի կարողանում թղթ վրայ նրա վճռածի կէսն անգամ ստուգել, Հասնել նրան միայն այն ժամանակ կարելի է, երբ մօր ձեռքին լողարիֆմի գիրք ունենալ։

Պրն. Ռիամանդին, որն 31 տարեկան է, մինչև վերջին ժամանակներս ցորենի առևտրով էր պարապում, իսկ այժմ թողել է իր այդ գործը և զբաղւում է . . . վէպեր ու ոտանաւորներ գրելով։ Նրա թուաբանութեան մէջ զոյց տուած արդանգը գեա ուսումնարանում եղած միջոցին էր աչքի ընկնում և շնորհիւ իր այդ արտակարգ ընդունակութեան, նա ուսուցչի տուած խնդիրները անգիր էր լուծում, առանց թուղթ փշացնելու։ Ինչպէս ընութեան մի արտասովոր երևոյթ, նրանով հետաքրքրւում են և գիտնականները, ի միջի այլոց և ուսուցչապետ Բինէն, իբրև գիտակ հոգեբան, նա ներկայացել է և Պետերբուրգի գիտութեանց ձեմարանի անդամներին ու հիացրել բոլորին իր հանձարով։

